ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Այսօր վերսկսվեցին պարապմունքները Ստեփանակերտի բոլոր դպրոցներում: Քաղաքի փողոցներում զգալիորեն ավելացել է ավտոբուսների և երթուղային տաքսիների թիվը: Միջոցներ են ձեռնարկվում երկաթուղային կայարանում բեռնաթափելու պարենամթերքի վագոնները և այն անհապաղ առաքելու խանութներ: Բարելավված է նաև բանջարեղենի ու մրգի մատակարարումը մարզի կոլտնտեսություններից ու սովխոզներից:

Քաղաքի առաջատար ձեռնարկություններում առավոտյան տեղի ունեցան հանդիպումներ բանվորների հետ: Դրանցում քննարկվեցին այն աշխատավորական կոլեկտիվներում աշխատանքը վերսկսելու գործնական հարցերը, որոնք շարունակում են պնդել, որ ԼՂԻՄ-ը դուրս բերվի Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից:

Բանվորների անարգել աշխատանքի դուրս գալու և առաջին հերթափոխում լիարժեք աշխատանքային գործունեություն նախապատրաստելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին մի շարք ձեռնարկությունների, ժողովրդական դեպուտատների քաղաքային սովետի գործադիր կոմիտեի ղեկավարների խնդրանքներին համապատասխան ԼՂԻՄ-ի և Ադրբեջանական ՍՍՀ Աղդամի շրջանի զինվորական պարետ, գեներալ-մայոր Վ. Պ. Ռոշչինը որոշում է ընդունել ս. թ. սեպտեմբերի 26-ից պարետային ժամի տևողությունը կրճատել մինչև առավոտյան ժամը 5-ը:

Առաջվա պես սուր է մնում Հայկական ՍՍՀ-ից հեռացած ադրբեջանցիների տեղավորման հարցը:

Օրվա ընթացքում հատուկ շրջանի տարածքում ոչ մի քրեական հանցագործություն չի գրանցվել: Հասարակական կարգի պահպանության մարմինները միջոցառումներ են անցկացնում զենքը առգրավելու և անձնագրային ռեժիմի կիրառումը վերահսկելու համար: Սեպտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը ԼՂԻՄ-ում, Աղդամի շրջանում անձնագրային ռեժիմի և պարետային ժամի խախտման համար ստուգման նպատակով կալանվել է 245 մարդ:

Օրվա ընթացքում առգրավվել է 102 հրացան: ԼՂԻՄ-ում և Աղդամի շրջանում առգրավված զենքի ընդհանուր քանակը կազմում է 855 միավոր:

ԼՂԻՄ է ժամանել ՍՍՀՄ դատախազության հատուկ ներկայացուցիչ, արդարադատության երրորդ կարգի պետական խորհրդական, ՍՍՀՄ գլխավոր դատախազի ավագ օգնական Յու. Խիտրինը, որը տեղական հեռուստատեսությամբ ունեցած ելույթում պատմեց Լեռնային Ղարաբաղում իր կատարելիք աշխատանքի նպատակների ու խնդիրների մասին:

Դատախազության մարմինները շարունակում են տների ու շինությունների հրկիզումների, մասսայական անկարգությունների փաստերի հիման վրա նախաքննում հարուցված քրեական գործերի քննությունը, ինչպես նաև Ա. Շահրամանյանի մահվան համար մեղավոր անձանց որոնումը:

(Արմենպրես)